



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Արցախը՝ հակահաբեկչական պայքարի առաջին գծում

Ծայրահեղ իսլամիստական խմբավորման կողմից վերջին օրերին իրականացված գործողությունները ցույց տվեցին, որ այս խմբավորումն անվարան ընդարձակում է իր աշխարհագրությունը՝ ընդունակ լինելով ամենուր իրականացնել իր սեւ գործը: Սա նաեւ վկայում է Իսլամական պետության՝ գնալով ավելի խորացող հովանավորչության մասին, որում, հրապարակված փաստերի համաձայն, անմասն չէ նաեւ Թուրքիան՝ իրեն հատուկ ձեռնարկով: Ահաբեկչության աշակերտված Թուրքիայի իշխանություններն այս խմբավորմանն օգտագործում են որպես զենք՝ իրենց «խանգարողներին» դեմ: Ստացվում է, որ այսօր Իսլամական պետության այդքան սատարող երկիրը նույնպես հանդիսանում է աշխարհի անվտանգությանը սպառնացող երկիր, քանզի հայտնի ճշմարտություն է՝ թշնամուղ սատարողը եւս քո թշնամին է:

Ի հետեւումն Եգիպտոսում ՌԴ օդանավի կործանմանը՝ Փարիզի դեպքերը պատճառ դարձան, որ Եվրոպան ու Ռուսաստանը սթափվեն՝ խորապես զգալով ԻԴ-ի կործանիչ գոյությունը միասնաբար ոչնչացնելու անհետաձգելի անհրաժեշտությունը:

Սիրիայի տարածքում ռուսական ռազմական ինքնաթիռի կործանումը թուրքական զինուժի կողմից էլ ավելի սրեց իրավիճակը: Այսօր առկա կիսապատերազմական վիճակը ենթադրում է, որ տարածաշրջանում Ռուսաստանի միակ հուսալի դաշնակից Հայաստանն էլ, Արցախով հանդերձ, անմասն չի մնա առճակատման առաջին գծում հայտնվելուց: Անսպասելի չեն Անկարայի հովանավորչությամբ Ադրբեջանի կողմից Ղարաբաղյան հարցի հնարավոր թեժացումներն այս ամենի համայնապատկերում: Մյուս կողմից էլ, ՌԴ-ն կփորձի օգտագործել Հայկական հարցը՝ Թուրքիայի վրա ճնշումներ գործադրելու նպատակով: Վերջինիս վառ ապացույցն է Պետդոմայում օրեր առաջ մտցված՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտման համար պատասխանատվության կոչելու օրենքի նախագիծը: Այստեղ կարելի է մի բան՝ Հայկական կողմը պետք է կարողանա ցուցաբերել այնպիսի քաղաքականություն, որպեսզի կարողանա խուսափել այս բոլոր քաղաքական խաղերի ու բախումների արդյունքում տուժողի դերում հայտնվելուց...

Այս իրադարձությունների ֆոնին հարկ է հիշել, որ անցյալ տարի այս նույն ժամանակներում գորավորությունների ժամանակ օդ բարձրացած հայկական ուղղաթիռը խոցվեց ադրբեջանական զինուժի կողմից, ունեցանք մարդկային կորուստներ, եւ Ադրբեջանը կեղծ պատճառներ բերեց, թե իբր ուղղաթիռը հատել էր Ղարաբաղ-ադրբեջանական սահմանը: Ահաբեկչության դեմ նույն պայքարողների կողմից ոչ մի դատապարտող արձագանք չեղավ, արձագանք չեղավ նաեւ վերջերս Թուրքիայի ուղղաթիռների կողմից ՀՀ օդային սահմանի խախտման փաստի առևտրային:

Անշուշտ, նման ոտնձգություններին չարձագանքելը առիթ է դառնում, որ հակառակորդն ավելի լկտի պահվածք ցուցաբերի: Պատահական չէ, որ Թուրքիան, այսպես թե այնպես, ուզում է ճանաչել Իսլամական պետությունը, եւ հենց այս օրերին Թուրքիայի նորանշանակ ԱԳ նախարարը, հրահրելով Ադրբեջանին, հայտարարում է, որ Թուրքիան կանի ամեն ինչ, որպեսզի Ադրբեջանի «օկուպացված» տարածքներն ազատվեն: Իրադարձությունների հուլովայն արդեն փաստել է, որ Թուրքիան իր կրտսեր եղբոր հետ պաշտպանում է մի-ջազգային ահաբեկչությունը, իսկ Հայաստանն ու հատկապես Արցախը թե՛ քաղաքական, թե՛ ռազմական իմաստով հակահաբեկչական պայքարի ճակատի առաջին գծում են:



ԼՂՀ ԱԺ-ն կոչ է անում միասնաբար մասնակցել համահայկական դրամահավաքին

Նոյեմբերի 26-ին տեղի է ունեցել Արցախի Հանրապետության 6-րդ գումարման Ազգային ժողովի 2-րդ նստաշրջանի հերթական լիազումար նիստը:

Անցնելով օրենսդրական նախաձեռնությունների քննարկմանը՝ խորհրդարանն ընդունել է «Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Աշխատանքի պետական տեսչության մասին» ԼՂՀ օրենքը ուժը կորցրած ճանաչելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքները, «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» եւ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքում «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքում մասին» ԼՂՀ օրենքը, առաջին ընթացքում՝ «Անասնաբուժության մասին» ԼՂՀ օրենքը:

Նիստի օրակարգում ներառված՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագծում, մասնավորապես՝ վերոնշյալ օրենքի «գ» կետում ավելացնել հետևյալ պարբերությունը. «Եկամտային հարկի, շահութահարկի եւ քաղաքացիական վճարների գումարներից համայնքների բյուջեներ կատարվող մասնաճանաչման տուրքային ծախսերը սահմանվում են յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով»:

Ըստ «Վերածնունդ» խմբակցության ղեկավար Հայկ Խանույանի՝ օրենքի լրացումը թույլ կտա իրական մեխանիզմ ստեղծել տեղական ինքնակառավարման մասին ԼՂՀ օրենքով նախատեսված համայնքային բյուջեի ձեւավորման աղբյուրների ապահովման համար, մասնավորապես՝ եկամտային հարկի, շահութահարկի եւ քաղաքացիական վճարների մասին» ԼՂՀ օրենքում:

«Հարկ եւ համարում նշել, որ պետական շինարարության, պետական տարբեր օղակների զարգացումը համաչափ պետք է լինի: Այսօր համայնքները չեն կայանում, քանի որ ինքնաբավ չեն: Պետք է այնպես անել, որ համայնքներն ինքնաբավ լինեն: Դրա համար կառավարությունը պետք է մտածի համայնքի սեփական եկամտների ավելացման մասին, պետությունը շահագրգռված պետք է լինի, նախ եւ առաջ, համայնքների զարգացման հարցով: Սա է ենթադրում ժողովրդավարություն որդեգրած երկրի սկզբունքները», - նշել է ԼՂՀ Ազգային ժողովի «Դաշնակցություն» խմբակցության անդամ Ալյոշա Գաբրիելյանը:

Խորհրդարանի կողմից օրենքի նախագիծը հավանության չարժանացավ (13 դեմ, 10 կողմ եւ 6 ձեռնպահ): Ազգային ժողովն ի գիտություն է ընդունել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2015 թվականի իննամսվա պետական բյուջեի կատարման տեղեկատվությունը, որը ներկայացրել է ֆինանսների նախարար Ս. Թեւոնյանը: ➔ 2

Հեռուստամարաթոնին հանգանակվել է ավելի քան 10 մլն ԱՄՆ դոլար

Լոս-Անջելեսում Նոյեմբերի 26-ին, Երեւանի ժամանակով ժամը 22:00-ին մեկնարկել էր «Հայաստան» համահայկական հիմնադրամի՝ ավանդական ամենամյա հեռուստամարաթոնը...

Հայաստանի համահայկական հիմնադրամ

Կարողացեք 2-րդ էջում

Ամստերդամում Ղարաբաղյան հարցը ներկայացվել է գիտական հարթակում

Օրերս Ամստերդամի Ազատ համալսարանում տեղի ունեցավ գիտաժողով՝ «Զճանաչված երկրներ. ո՞րն է լուծումը» խորագրով:

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ Դաշնակցության Նիդեռլանդների Հայ Դատի հանձնախումբը:

Կարողացեք 3-րդ էջում

Նախապատերազմական իրավիճակի ստեղծման թուրքական դրդապատճառները

Ռուսական ռազմական ինքնաթիռի խոցումը Թուրքիայի կողմից սիրիական պատերազմի նոր մագլցողականություն ապահովող քայլ է, եւ իբրեւ այդպիսին՝ դժվար մեկնաբանելի: Դեպքից ընդամենը մի օր առաջ Անկարայի կողմից կատարված հայտարարությունների տարողության բարձրացումը եւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտակարգ նիստի պահանջը հիմնվել էին Անկարայի հովանավորյալ Սիրիայի թուրքամենների հանդեպ Մոսկվայի իրականացրած զինվորական գործողությունների երեւոյթի վրա:

Իրադարձությունների զարգացումը պատերազմը տեղափոխեց ռուս-թուրքական ուղղության վրա: Այս առումով կանխատեսումները խայտաբղետ են: Մագլցողականության տեսանկյունից ենթահող շահել է, եւ որոշ վերլուծումներում չի բացառվում ոչ միայն Մոսկվա-Անկարա դիվանագիտական կապերի խզումը, այլ նաեւ՝ ՌԴ-Թուրքիա պատերազմը:

Կանխատեսումների իրատեսակա- նությունը՝ իր հերթին: Այնուամենայնիվ, իրավիճակը նախապատերազմական է: Ռուսաստանի արտգործնախարարը չեղյալ է հայտարարում իր այցելությունը Անկարա, զգուշացնում է ռուս քաղաքացիներին՝ չմեկնել Թուրքիա, ռուսական զբոսաշրջության մեծագույն ընկերու- թյունը դեպի Թուրքիա իր ծրագրերն առ- կախում է՝ մինչ ռուս լրագրողներ փո- խադրող ավտոբուսը ենթարկվում է հարձակման, իսկ ռուսական ուղղաթի- ռը՝ հրթիռակոծման:

Մոսկվա-ԻՊ պատերազմի բովում եւ Մոսկվա-Անկարա նախապատերազմա- կան իրավիճակի ստեղծման նախօրյա- կին Անկարայի կողմից թուրքամենների

հարցի օգտագործումն իր խորքում ծխածածկույթի տակ առնել էր հարձա- կողականի դիմելու բուն դրդապատճառ- ները:

Անկասկած, Թուրքիա-Սիրիա սահմա- նին թուրքմեն ազգաբնակչությունը Ան- կարայի ներշնչման տակ պահելը եւ այն զինվորաքաղաքական գործոնի վերածե-



լը կարելորագույն առաջադրանք էր Ան- կարայի համար: Խնդիրը, սակայն, շատ ավելին էր:

Ռուսական կործանիչները ըստ Էու- թյան քանդում էին Թուրքիա-ԻՊ ցամա- քային կամուրջները՝ կանխարգելելով Անկարայի եւ ԻՊ-ի միջեւ ստեղծված ուղ- դակի կապը: Ռուսական միջամտությունը նաեւ Թուրքիայի եւ Սիրիայի միջեւ անվտանգության գոտու ստեղծման ծրագրի արգելակումն էր, որն, ի դեպ, միայն ռուսական կողմից չէ, որ խոչըն- դոտվում էր:

Թուրքական հարձակումը ռուսական ինքնաթիռի դեմ պատերազմական հս- տակ գործողություն էր, որ կտրուկ

մագլցման առաջնորդեց տիրող լարված իրավիճակը: Թուրքմենների գործոնի շահարկումը այստեղ զուտ պատրվա- կային բնույթ ուներ: Թուրքիան հարված- վել էր ոչ միայն ցամաքային կամուրջնե- րի քանդումով, այլ նաեւ ԻՊ-ի ֆինանսա- վորումով: Հսկայական գործարքը փլուզ- վում էր, երբ ԻՊ-ի նավթի արդյունաբե-

նշանակում էր, որ Անկարան ներկա արարքի համար խաղասեղանին է դրել ամեն ինչ:

ՌԴ նախագահի հայտարարությունը պատասխանատվության սլաքն ուղղում էր միացյալ ԱՄՆ-ին եւ ՆԱՏՕ-ին: Հուշում էր, որ Մոսկվան Վաշինգտոնի հետ օդա- յին միջադեպերի նախազգուշացման մասին համաձայնություն ուներ եւ այժմ... թիկունքից հարված:

Թիկունքից հարվածված լինելու հաս- տատումը ենթադրել է տալիս, որ Թուր- քիան հակահարձակչական պատերազմ հայտարարածների շարքում է եւ միջազ- գային համաձայնության ենթակա կողմ: Սակայն խորքում թիկունքի հարված չէ, այլ ուղիղ հակառակորդի: Մինչ Թուրքի- այի վարչապետի գործակատարը հայ- տարարում էր, որ իր երկրի գործողու- թյունն իրավաչափ է՝ նկատի ունենալով, որ, անշուշտ, ըստ նրա՝ ռուսական ինք- նաթիռը հատել է թուրքական օդային սահմանը:

Սիրիական պատերազմը՝ սիրիական բանակ, ազատ բանակ, Ջաբաթ ալ Նուսրա-ԻՊ, ապա քուրդ զինյալ ուժեր, զինվող թուրքմեններ ու տակավին՝ իրանյան գործոնի ներկայություն, եւ ապա՝ ռուսական օդուժ ձեւափոխումնե- րից հետո, այժմ թեւակոխել է ռուս-թուրք- ական նախապատերազմական իրավի- ճակ:

Հավելենք, որ Պուտինի օգնական Պետկովը, խոսելով պատասխանի մա- սին, հայտնել է, թե դա ռազմական ճա- նապարհով չպիտի լինի: Ինչ- որ կիսա- պաշտոնական բնույթ ունի, բայց չի կա- րող նախանշել դեպքերի հետագա զար- գացումները:

Շահան ԳՍԼՏԱՀԱՐՅԱԼ
«Ազդակ» թերթի գլխավոր խմբագիր

Բացահայտելով Թուրքիայի կործանարար դերը



նրանց վիրավորներին թուրքական հի- վանդանոցներում բուժելու մասին հիմ- վավորված տեղեկություններ:

Իրադարձություններին հետեւողի հա- մար պիտի պարզ լինի, որ ահաբեկչու- թյան դեմ կոչերով հանդես եկող Թուրքի- ան իրականում ահաբեկչության ծնունդը սատարող ու այն ֆինանսավորող գլխա- վոր երկրներից մեկն է:

Թուրքիայի համար ՏԱՀԵԸ-ը սիրիա- կան թոհուբոհի մեջ երկրի քանդմանը նպաստող, սիրիական վարչակարգի տապալման, ինչպես նաեւ քրդական գործոնի դեմ օգտագործելի մի հերթա- կան խաղաքարտ է:

Սիրիական կողմերը բազմիցս են շեշ- տել, թե Թուրքիան դերակատար է ՏԱ- ՀԵԸ-ի եւ ընդհանրապես ահաբեկչական շարժումների ընդլայնման մեջ, ու փաս- տերով ներկայացնում էին, որ Միջին Արեւելքում ահաբեկչական շարժումը տեղայնական բնույթից դուրս պիտի գա ու հասնի արեւմտյան երկրներ:

Սիրիայի արտաքին գործերի նախարա- րությունը ՄԱԿ-ին ուղղված իր բազմա- թիվ նամակներով կոչ էր ուղղում «ցա- մաքացնելու» նման շարժումների ֆի- նանսավորման աղբյուրներն ու պատժե- լու նրանց հոսքը դյուրացնող երկրներին: Արեւմուտքն ու ԱՄՆ-ն, սակայն, անտար- բեր էին ձեւանում Թուրքիայի երկրորդ

քաղաքականության նկատմամբ:

Վրա հասավ գաղթականների հարցը, եւ Թուրքիան կատարելապես օգտագոր- ծեց մարդկային այն ցավոտ երեւոյթը եւս՝ դյուրացնելով գաղթականների հոս- քը դեպի արեւմտյան երկրներ, նրանց հետ արտահանելով նաեւ ահաբեկչի- ներ:

Գաղթի ճամփին խեղդամահ մանուկ- ների պատկերները շահարկվեցին, ու աղետալի երեւոյթները Թուրքիայի թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական հաշ- վարկների ծառայեցին:

Այսօր Թուրքիան մեծ գումարներ է պահանջում եվրոպական երկրներից՝ իբրեւ թե սիրիացի գաղթականների հա- մար ավելի լավ պայմաններ ստեղծելու համար, մինչ այլ երկրներ գաղթական- ներ էին ընդունում՝ առանց խաղաքար- տի վերածելու գաղթի երեւոյթը:

Թուրքիային անպատիժ թողնելու այս անտարբերության գլխավոր պատճառ- ներից մեկը հանդիսացավ ահաբեկչա- կան ալիքի ընդլայնումը:

Այստեղ տեղին է նշել Թուրքիայի Անթա- լիա քաղաքում Զսանների խմբակի եր- կօրյա վեհաժողովի ավարտին հրապա- րակված հաղորդագրությունը, ուր շեշտ- վում էր ահաբեկչության ֆինանսավոր- ման «ցամաքացման» կարելորությունը: Վեհաժողովի ժամանակ Ռուսաստանի

նախագահ Վլադիմիր Պուտինը հստա- կորեն նշեց, որ «Ահաբեկչությունը ֆի- նանսավորում են 40 երկրներ, որոնց շարքում են նաեւ Զսանների խմբակի՝ վեհաժողովին մասնակից երկրները»:

Մատնանշումը հստակ էր: Մնում է լու- սարձակի տակ պահել ահաբեկչության դեմ պայքար հայտարարող, բայց իրա- կանում այն սնուցող երկրի դիմակի տակ քողարկված քաղաքականությունը, այն երկրի, որը Եվրոպա մուտք գործելու իր նկրտումների ճամփան հարթում է Նույն Եվրոպայի ապահովության խախտմանը նպաստելով, ապա՝ ցավակցողի դեր խաղալով:

Ֆրանսիայում տեղի ունեցած ահա- բեկչական արարքներն առավել եւս շեշ- տում են միջազգային ընտանիքի կողմից ահաբեկչության դեմ պայքարի եւ ահաբեկչությանը նյութապես սատա- րող պետություններին պատժելու հա- սարակության մոտեցումի որդեգրման կարելորությունը:

Տարածաշրջանում հատկապես Թուրքի- այի կործանարար դերին վերջ տալու այլ ելք չկա: Անպատիժ մնալով՝ Թուրքիան պիտի շարունակի սնուցել հավատարո- ժողական ահաբեկչությունը:

Չարմիկ ՊՈՂԻԿՅԱԼ
«Գանձասար», Սիրիա

Նոր տարում՝ նոր բնակարանի սպասումով



անցյալ դարում՝ 1929 թվականին եւ ծառայում էր որպէս վիճակագրական գրասենյակ: Այս պահին շէնքում ապրում է 6 ընտանիք:

Ազատամարտիկների 23 հասցեում գտնվող շէնքի երկրորդ հարկում գտնվող 3 սենյակները, ուր ապրում է մեծ ընտանիքը, դժվար է բնակարան համարել: Շէնքը վթարային է, եւ ցանկացած փոքր ցնցում կարող է ճակատագրական լինել շէնքի բնակիչների համար:

Ընտանիքի հայրը՝ Նորայրը, թույլ չտվեց նկարել տան հյուրասենյակը, որն աննկարագրելի վատ վիճակում է գտնվում, ինչպէս նաեւ թույլ չտվեց նկարել իրենց՝ պատճառաբանելով, որ չի ուզում խղճահարություն առաջացնել:

Նորայրը կնոջ՝ Լուսինեի հետ, արդեն 16 տարի է, ապրում է այս շէնքում: Այս պայմաններում են ծնվել եւ մեծացել ընտանիքի 6 զավակները: Տունը հոր սեփականությունն է: Ժամանակին հայրը, մայրը եւ եղբայրը նրանց հետ էին բնակվում, սակայն եղբոր եւ հոր հիվանդության պատճառով (եղբայրը հոգեկան շեղումներ ունի, իսկ հայրը երկրորդ կարգի հաշմանդամ է) տեղափոխվել են հորեղբոր առանձնատուն:

Ազատամարտիկների 23 հասցեում գտնվող շէնքում բացակայում են բոլոր հարմարությունները. սանհանգույց, ջրատար չկա: Բնակիչները ջուր են բերում շէնքի դիմաց գտնվող ծորակից, որն ամռանը բարակում, շատ հաճախ էլ կտրվում է, իսկ ձմռանը սառչում է:

«Ձուրը դույլերով բերում ենք, իսկ օգտագործված ջուրը նորից տանում եւ թափում ենք բակում: 6 երեխաների հետ՝ պատկերացրեք դա ինչ տանջանք է: Դրան գումարվում է ընտանիքի լվացքը: Լվացքի օրերը վեր են ածվում իսկական փորձության», - նշում է բազմազավակ մայրը:

վակ մայրը: Շէնքի բնակիչների համար մի քանի տարի առաջ կառուցված զուգարանը այժմ չի գործում, մոտակա զուգարանն էլ գտնվում է 150-200 մետր հեռավորության վրա:

Դրսից արդեն տեսանելի են շէնքի բազում խնդիրները: Տանիքը ծոված է, պատերը՝ հեռացած: Շէնքի աստիճանները փայտից են պատրաստված, որոնք արդեն այնքան է հնացել, որ ավելորդ մի շարժում կարող է ճակատագրական լինել: Բոլոր էլեկտրական լարերն անսարք վիճակում են:

«Նույնիսկ մանր վերանորոգումներ անելն անհնարին է: Շէնքը շատ հին է, այն կառուցված է հիմնականում փայտից եւ հարդից: Էլեկտրական լարերն արդեն այնքան հին են, որ մաշվել են, եւ նույնիսկ, երբ մի փոքր ձեռք ես տալիս՝ կտրվում են», - պատմում է Նորայրը:

Ձմռան ամիսներին բոլոր այս խնդիրներին գումարվում է նաեւ սենյակները տաքացնելու խնդիրը: Ձմռանը ընտանիքի աղջիկները՝ 5 հոգով քնում են մեկ ննջասենյակում, ուր միայն մեկ մահճակալ կա: Հայրը եւ երկու զավակները բազմոցին են քնում:

«Պատերի ճեղքերն այնքան մեծ են, եւ տանիքն էլ այնքան խարխված է, որ սենյակները չեն տաքանում: Հոկտեմբերի սկզբից վառարան ենք վառում, սակայն ապարդյուն՝ սենյակներն անհնար է տաքացնել», - պատմում է Լուսինեն:

Նորայրը մշտական գործ չունի, բանվորությամբ է զբաղվում: Այժմ չի բողոքում գործի պակասից՝ նշելով, որ այս պահին Մարտունի քաղաքում շինարարական աշխատանքներ կան: Ձմռանը ընտանիքի եկամուտը միայն երեխաների նպաստն է լինում եւ 16 ամյա որդու՝ Կարենի՝ հացի փուռում որպէս հաց-

թուխ վաստակած չնչին գումարը:

Կարենը, Մարտունու արհեստագործական ուսումնարանում սովորելուն զուգահեռ, նաեւ աշխատում է՝ ընտանիքի բեռը թեթեւացնելու համար:

3 ամիս առաջ ծնվել է Կանյանների վեցերորդ զավակը՝ Արմինեն: Որպէս բազմազավակ ընտանիք, կառավարության կողմից սահմանված ծրագրով, նրանց պետք է բավարարեն բնակարանով:

«Ելնելով մեր պայմաններից, ձմեռը սկսվելուն պէս, ընտանիքիս համար սկսվում են ամենադժվար օրերը: Ես հիմա մեկ երազանք ունեմ. «Այս Նոր տարին անցկացնենք ուրիշ, կարելորդ՝ տաքուն բնակարանում, եւ գոնե մեր վեցերորդ զավակը այս պայմաններում չմեծանա», - ասում է Լուսինեն:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ



Սահմանամերձ գյուղերի 120 պատանիներ ՀՕՄ-ի նախաձեռնությամբ մասնակցել են կրկեսի ներկայացմանը

ՀՕՄ-ի Արցախի միավորի նախաձեռնությամբ ԼՂՀ սահմանամերձ երկու համայնքների՝ Մատաղիսի եւ Թալիշի 120 պատանիներ օրերս ներկա են գտնվել Ստեփանակերտում Սանկտ Պետերբուրգի «Իմպերիալ» շապիտո կրկեսի ներկայացմանը:

Արցախի ՀՕՄ-ին իր օժանդակությունն է ցուցաբերել նաեւ ԼՂՀ Պաշտպանության բանակը՝ ապահովելով երեխաների այցը մայրաքաղաք:

Նախքան ներկայացումը՝ երեխաներն այցելել են Ստեփանակերտի տեսարժան վայրեր:

ՀՕՄ-ի Արցախի միավորը վերջերս երեւանում կայացած ՀՕՄ-ի համահայկական 71-րդ ժողովին ներկայացրել է սահմանամերձ գյուղերի աջակցության եւ օժանդակության ծրագիր «Ապահով մանկություն սահմանամերձ գյուղերում» խորագրով, որի շրջանակներում էլ իրականացրել է այս ծրագիրը:

ՀՕՄ-ի Արցախի միավորի ատենապետուհի Արմինե Հարությունյանի խոս-

քերով՝ ծրագիրը շարունակական է լինելու՝ ներառելով ոչ միայն ժամանց ապահովելու, այլեւ շատ ուրիշ ծրագրեր, այդ թվում՝ կյուրթական եւ բարոյական:



«Սահմանամերձ գյուղերում ապրող ցանկացած երեխա պետք է զգա մեր աջակցությունը, եւ, որ ամենակարե-

ւորն է, հնարավորություն ունենա մասնակցելու պատանեկան մշակութային ներկայացումների, ծրագրերի: Մենք գիտակցում ենք, որ ամուր սահմանը հզոր պետության կայացման գրավա-



կաններից մեկն է, եւ այս երեխաները ծնված օրվանից սահմանապահ են: Պարտավոր ենք ամեն ինչ անել, որպէս-

զի գոնե մի քիչ թեթեւացնենք իրենց կյանքը եւ գույներ տանք մանկությանը», - ասում է Արմինե Հարությունյանը:

Ժաննա Եղիզարյանը՝ Մատաղիսի եւ Տոնաշեն գյուղերի ֆիզիկայի ուսուցչուհին, որն ուղեկցում էր Մատաղիսի աշակերտներին, նշեց, որ սա առաջին անգամն է, որ աշակերտները հնարավորություն են ունենում միասին մասնակցելու որեւէ մշակութային միջոցառման, եւ, բացի դրանից, մի ամբողջ օր գտնվելու ուշադրության կենտրոնում՝ առանց մտածելու, թե՛ ուր որ է կսկեն կրակոցները:

«Պետք է նշեմ, որ երեխաները, անկախ չդադարող կրակոցների եւ ընդմիջտ սպառնացող վտանգի, լավատեսորեն շարունակում են իրենց «անհոգ մանկությունը»: Սակայն, անհրաժեշտ է նրանց ուշադրության կենտրոնում պահել՝ փորձելով ապահովել այն հնարավորություններով, ինչ ունեն քաղաքի երեխաները», - ասաց նա:

«ԱՊՐԱՍԺ»

Կայացել է ՀՀԴ Եվրոպայի երիտասարդական միությունների համատեղ խորհրդաժողովը



Նոյեմբերի 20-22-ը Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում տեղի է ունեցել ՀՀԴ Եվրոպայի երիտասարդական միությունների համատեղ խորհրդաժողովը: Խորհրդաժողովը կրում էր «ՀՀԴ երիտասարդությունը եւ Հայ Դատի պահանջատիրության արդի պայքարը» խորագիրը:

Խորհրդաժողովը նախաձեռնել էր ՀՀԴ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միությունը՝ ՀՀԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի օժանդակությամբ:

Խորհրդաժողովին մասնակցել են ավելի քան 70 երիտասարդներ՝ Եվրոպայի 8 քաղաքներից, ինչպես նաեւ՝ մեկական ներկայացուցիչներ Հայաստանից ու Արցախից:

Չեկույցներով հանդես են եկել ՀՀԴ Բյուրոյի անդամներ Արմեն Բուստամյանը, Մուրադ Փափազյանը, ՀՀԴ Բյուրոյի երիտասարդական գրասենյակի պատասխանատու Սարգիս Մկրտչյանը, ՀՀԴ Եվրոպայի Հայ Դատի պատասխանատու Գասպար Կարապետյանը, Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի տնօրեն Հայկազ Ավդոջյանը եւ ՀՀԴ Ֆրանսիայի Կենտրոնական կոմիտեի անդամներ:

Խորհրդաժողովում քննարկվել են Հայաստանի ներքաղաքական իրավիճակը, Արցախի բանակցային գործընթացների վերջին զարգացումները, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների ներկա իրավիճակը, Ցեղասպանության հատուցման եւ հողային պահանջատիրության հարցերը, դրանց վերաբերյալ ՀՀԴ Հայ Դատի ռազմավարական սկզբունքները, քրդական հարցը եւ Թուրքիայի հայության ներկա խնդիրները:

Եռօրյա քննարկումների եւ աշխատանքի արդյունքում՝ խորհրդաժողովը հանգել է հետևյալ եզրակացությանը. Հայ երիտասարդության պատրաստվածության մակարդակը պահանջատիրության աշխատանքների առնչությամբ բավարար չէ: Այս մարտահրավերը հաղթահարելու համար խորհրդաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է ընդլայնել ՀՀԴ երիտասարդական եւ պատանեկան միությունների շարքերը, ինչպես նաեւ՝ աշխարհագրական տարածելիությունը: Բարձրացնել երիտասարդների պատասխանատվության մակարդակը՝ մղելով նրանց քաղաքական եւ մասնագիտական աշխատանքների:

ՀՀԴ երիտասարդական կեցվածքը հատուցման խնդրի եւ հողային պահանջատիրության նկատմամբ անփոփոխ է ու հետեւողական:

Հայ երիտասարդության պահանջատիրության առանցքը կազմում է Վիլսոնի իրավաբար վճիռը:

ՀՀԴ երիտասարդության քաղաքականացումն ուղղակիորեն կնպաստի օտար երիտասարդության մոտ հայանպաստ կեցվածքի զարգացմանը՝ Արցախի անկախության, միջազգային ճանաչման, հայության իրավունքների հատուցման եւ հողային պահանջատիրության հարցերի առնչությամբ:

Միաժամանակ, խորհրդաժողովը կարելու է տեղական եւ միջազգային քաղաքական կազմակերպությունների հետ առկա հարաբերությունների խորացման անհրաժեշտությունը:

ՀՀԴ երիտասարդությունը կարելու է պահանջատեր պոլսահայ երիտասարդության աշխատանքը: Խորհրդաժողովը գտնում է, որ իրենց հայկական արմատներին վերադարձող Արեւմտյան Հայաստանի եւ Թուրքիայի հայությունը նոր մարտահրավերներ ու հորիզոններ է բացում ՀՀԴ երիտասարդականի առջեւ, ինչպես նաեւ՝ աշխատանքի նոր հնարավորություններ:

Սկստի առնելով վերջին զարգացումները եւ Թուրքիայի ներքին իրավիճակը՝ ՀՀԴ երիտասարդությունը հայ-քրդական հարաբերություններին կմոտենա քաղաքական իրատեսությամբ եւ հայության իրավունքների նկատմամբ իրավատեր կեցվածքով:

Հայոց Ցեղասպանության հարյուրամյակից հետո հատուցման եւ հողային պահանջատիրությունը թեւակոխելու է նոր հանգրվան, որի հաջողության համար անհրաժեշտ է պահանջատեր հայ երիտասարդության կողմից գործնական պայքարի ծավալում:

ՀՀԴ երիտասարդական միություններին այս խորհրդաժողովի ընթացքում փոխանցված գիտելիքները, քննարկումներն ու եզրակացությունները միտում ունեն հավելյալ թափ տալու այս պայքարին:

Խորհրդաժողովի մասնակիցներն այցելել են Ֆրանսիայի Ալֆորֆիլ քաղաքի Մուրբ Մետրոպ Արաբյան անունը կրող տրոսկառոյց կրթարան, ծանոթացել տեղի աշխատանքներին:

Եռօրյա խորհրդաժողովի ընթացքում Ֆրանսիայում նշվել է նաեւ ՀՀԴ 125-ամյակը եւ Ֆրանսիայի «Նոր սերունդ» երիտասարդական միության 70-ամյակը: Տոնակատարությանը մենահամերգով հանդես է եկել ազգային-հեղափոխական երգերի կատարող Գառնիկ Սարգսյանը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ



Կեղծ հայագիտական հաստատությունները եվ նրանց գործունեությունը

Այսօր աշխարհի տարբեր երկրներում գործում են մի շարք հայագիտական հաստատություններ: Դրանց կարելի է դասակարգել երկու խմբի.

1. Հայագիտական հաստատություններ, որոնք զբաղվում են հայոց պատմության, մշակույթի ուսումնասիրմամբ ու հայկական քաղաքակրթության տարածմամբ, ինչպես նաեւ Սփյուռքում իրականացնում են հայապահպանության գործառնությունը:

2. Հայագիտական հաստատություններ, որոնք միայն անվանապես են այդպես կոչվում. իրականում նրանց կողմից կատարված ուսումնասիրությունները կրում են հակահայկական բնույթ:

Անդրադառնանք վերոնշյալ վերջին խմբին՝ փորձելով ներկայացնել դրա մասին ուսումնասիրություն:

Նմանատիպ հաստատությունները հիմնադրվում են իրենց գործունեությունն են ծավալում Թուրքիայում, Ադրբեջանում, ինչպես նաեւ այդ երկրների պետական վերնախավի նախաձեռնությամբ եւ օժանդակությամբ՝ այլ երկրներում (ԱՄՆ, Եվրոպական մի շարք երկրներում եւ այլուր): Այդ հաստատությունների հիմնական գործառնությունները տեղեկատվական հարթությունում վերոնշյալ երկրների քաղաքական՝ հակահայկական շահերի սպասարկումն է:


Նշեմ, որ Թուրքիայում եւ Ադրբեջանում նման «հայագիտությունը» ոչ միայն կիրառում են հակահայկական քարոզչության նպատակներով, այլ նաեւ սպասարկում են հատուկ ծառայություններին: Այս քաղաքականությունն իրականացնելու նպատակով ոչ միայն հայա-

տերբուրգի համալսարան՝ հայոց լեզու սովորելու, ու հետագայում՝ հայագետ մասնագետների պատրաստման նպատակով Անկարայի համալսարանում հայոց լեզվի ու գրականության ամբիոնի հիմնելու նպատակով: Այս քաղաքականության թիկունքում «միանգամայն հա-

սպագա աշխատակիցների եւ գործակալների լեզվագիտական ու երկրագիտական պատրաստմանը» /Հարությունյան Ա., Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը եւ դրանց գործունեությունն արդի փուլում, «Թուրքիա. Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները», Երեւան, 2007, էջ 170/: Թուրքիայում գործունեություն ծավալող «հայագիտական» գիտահետազոտական կենտրոնների հիմնադրումը մի շարք համալսարանների հումանիտար ֆակուլտետների հենքի վրա իրագործվել է կառավարության որոշմամբ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջարկությամբ:

Կայացրած որոշումների հետեւանք հանդիսացավ տասնյակ նեղ մասնագիտացված ինստիտուցիոնալ բաժինները, տարբեր ակադեմիական ստորաբաժանումները: Նմանատիպ հաստատությունների հիմնադրումը պայմանավորված էր 1990-2000թթ. տարբեր երկրների ու կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման դեմ թուրքական պետական մեքենայի կողմից իրագործվող ժխտողական քաղաքականությամբ:

*Հովիկ ԱՎԱՆԵՍՏՎ
Շարունակությունը՝ հաջորդիվ*



գիտական ուղղվածություն ունեցող կառույցներ, այլեւ համապատասխան մասնագետներ են գործուղվում արտերկրի հայագիտական կենտրոններ՝ վերապատրաստման նպատակով:

1999թ. թուրք մասնագետների մի ստվար հատված գործուղվել են Սանկտ Պե-

տակությամբ նշմարվում են թուրքական քաղաքականության երկարաժամկետ հետախուզական նպատակները եւ խնդիրները՝ ուղղված Հայաստանի դեմ արդյունավետ հետախուզական գործունեություն ծավալելու նպատակով Թուրքիայի հատուկ ծառայությունների ներկա ու

